Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-3-22.4-Մ2-19 Գլխավոր մասնագետ(2024-02-13)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն | Օտարերկրացիների իրավական կարգավիճակի որոշման վարչություն | Վիզաների բաժին | Գլխավոր մասնագետ, (27-3-22.4-Մ2-19)

1.2 Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջան, Դավթաշեն 4-րդ թաղ., 17/10 շենք:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացնում է ՀՀ մուտքի վիզաներ տրամադրելու և դրանց ժակետները երկարաձգելու աշխատանքները.
2. իրականացնում է e-visa համակարգի միջոցով ստացված դիմումների վերաբերյալ վարույթները.
3. իրականացնում է օտարերկրացուն ՀՀ մուտքի վիզա ստանալու հրավերների ընդունման, սահմանված կարգով ընթացք տալու և ձևակերպելու, հրավերները հաստատելու և հաշվառելու աշխատանքները:

Իրավունքները.

- անձին մուտքի վիզա, այդ թվում e-visa համակարգի միջոցով, տրամադրելու, ՀՀ մուտքի վիզան երկարաձգելու վարույթի իրականացման գործընթացում ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր և նյութեր.

- օտարերկրացուն ՀՀ այցելելու հրավեր ձևակերպելու վարույթի իրականացման գործընթացում ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր և նյութեր
- ՀՀ պետական մարմիններից, անհրաժեշտության դեպքում նաև օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստանալ վարույթի իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր.
- Ծառայության մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից և Ծառայությանը ենթակա կազմակերպություններից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն.
- մասնակցել ՀՀ գործող միջազգային և հասարակական կազմակերպություններում քննարկման աշխատանքներին, օտարերկրացիների վիզաների և հրավերների թեմայով սեմինարներին և գիտաժողովներին

Պարտականությունները.

- ուսումնասիրությունների արդյունքում բացառել ՀՀ մուտքի վիզա ստանալու կամ ՀՀ մուտքի վիզան երկարաձգելու համար դիմող անձի օրենքի ուժով քաղաքացի հանդիսանալու հանգամանքը.
- ստուգել ՀՀ մուտքի վիզա ստանալու կամ ՀՀ մուտքի վիզան երկարաձգելու համար դիմող օտարերկրացիների ՀՀ տարածքում օրինական գտնվելու/բնակվելու հանգամանքը
- ընդունել, ուսումնասիրել ՀՀ մուտքի վիզա ստանալու կամ ՀՀ մուտքի վիզան երկարաձգելու վերաբերյալ դիմումները, այդ թվում՝ e-visa համակարգի միջոցով, ստուգել փաստաթղթերի ամբողջականությունը, ՀՀ օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերի՝ օտար լեզվով կազմված լինելու դեպքում նաև դրանց՝ օրենքով սահմանված կարգով կատարված լինելը և թարգմանությունների հայերեն վավերացված լինելը, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը՝ դեսպանության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից հաստատված լինելը.
- ՀՀ մուտքի վիզա ստանալու կամ ՀՀ մուտքի վիզան երկարաձգելու վերաբերյալ դիմումների քննարկման արդյունքում կատարել համապատասխան ստուգումներ, կատարել օրենսդրությամբ նախատեսված հարցումներ, կազմել վարույթի արդյունքում կայացվելիք համապատասխան որոշումների նախագծեր, ստորագրել նշված որոշումները /դրական որոշումն արտացոլել ՀՀ մուտքի վիզան ձևավորելու, իսկ մուտքի վիզան երկարաձգելու դեպքում՝ օտարերկրացու անձնագրում համապատասխան նշում կատարելու միջոցով/
- հարուցել ՀՀ մուտքի վիզայի դադարեցման (ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու) հետ կապված վարույթներ, վարույթների արդյունքում կազմել համապատասխան որոշումների նախագծեր, ստորագրել այդ որոշումները,
- օտարերկրացիներին ծանուցել ՀՀ մուտքի վիզա տալը կամ ՀՀ մուտքի վիզան երկարաձգելը մերժելու, ՀՀ մուտքի վիզայի դադարեցման /ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու/ համապատասխան որոշումները
- ընդունել օտարերկրացիների ՀՀ այցելելու հրավերի ձևակերպման վերաբերյալ դիմումները, ստուգել փաստաթղթերի ամբողջականությունը, ուսումնասիրել դրանք.
- ՀՀ այցելելու հրավերի ձևակերպման վերաբերյալ դիմումների քննարկման արդյունքում կատարել համապատասխան ստուգումներ, կազմել վարույթի արդյունքում կայացվելիք համապատասխան որոշումների նախագծեր, ստորագրել այդ որոշումները
- վարել հրավերների հաշվառումը, վարույթների շրջանակներում առերևույթ քրեական արարքի հատկանիշներ բացահայտելու դեպքում նյութերը փոխանցել քրեական վարույթ իրականացնող համապատասխան ստորաբաժանումներին, հարցումների շրջանակներում անձի հետախուզման մեջ գտնվելու հանգամանքը բացահայտելու դեպքում հետախուզման փաստի վերաբերյալ զեկուցել բաժնի պետին.
- իր կողմից իրականացված վարույթների արդյունքում արխիվացնել նյութերը՝ տեսակավորել ըստ պահպանման ժամկետների և վարույթի տեսակների
- Ծառայության մյուս կառուցվածքային ստորաբաժանումներին և Ծառայությանը ենթակա կազմակերպություններին տրամադրել ՀՀ մուտքի վիզա ստանալու կամ ՀՀ մուտքի վիզան երկարաձգելու վարույթն ավարտին հասցնելու վերաբերյալ

տեղեկատվություն և անհրաժեշտ փաստաթղթեր
- ներկայացնել առաջարկներ ՀՀ մուտքի վիզա տրամադրելու գործընթացների պետական կարգավորման ռազմավարությունների և դրանց իրականացումն ապահովող գործողությունների ծրագրերի մշակման նպատակով:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ փաստաթղթավարության բնագավառում երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Ծառայությունների մատուցում
  - Ժամանակի կառավարում
  - Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: